

ՄԵԿ ՕՐՈՒՄԸ ՄԵՉ 1006 ՎԱՐԱԿՈՒՄԵՆԵՐՈՒ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ

ՆԱԽԱՐԱՐ ՀԱՄԱՏ ՀԱՄԱՐ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ՝ ՎՏԱՆԳԱԻՈՐ ԿԱՅՈՒԹԵՆԷՆ ԱՌԱՋԱՐԿԵԼՈՎ ԵՐԿՈՒ ՇԱՐՎԱԾՈՎ «ՓԱԿԵԼ» ԵՐԿԻՐԸ

«Քորոնա» ժաիրի համավարակը կը շարունակէ Նորանոր մահեր հնձել Լիբանանէ՝ ահագնագային վիճակի մատնելով պատասխանատուները: Արդարեւ, շաբաթավերջին 11 Նոր մահերու եւ 1006 վարակուածներու արձանագրութիւնը ցնցիչ մրցանիշ մը եղաւ այս գծով՝ անցնող փետրուարէն ի վեր վարակումի առաւելագոյն թիւով: Առողջապահութեան նախարարի պաշտօնակատար Զամատ Զասան զգուշացուց եւ առաջարկեց երկու շաբաթով «փակել» երկիրը ընդհանուր: Ան ընկալածն այն կարգ մը լիբանանցիներն ու քաղաքացիները, որոնք պահանջուած լրջութեամբ չեն մօտենար այս վտանգին եւ կ'անտեսեն թելադրուող կանխարգելիչ միջոցառումները:

ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԿԸ ՀԱՎԱԶՆԵ

Միւս կողմէ, սակայն, ներքին գործոց նախարարի պաշտօնակատար Մուհամմադ Ֆահմիի գրասենեակը հաղորդագրութեամբ մը դատապարտեց առողջապահութեան նախարարին յարտարարութիւնը՝ նշելով, որ «Եթէ օրին տրուած թելադրանքները պատշաճ ձևով կատարուին, այս կացութեան չէինք յանգիլ»: «Լիբանանեան ընկերութիւնը խաղալիք չէ, որ շաբաթ մը երկիրը «փակելով» ու շաբաթ մըն ալ «բացելով» զբաղի», ընդգծեց հաղորդագրութիւնը:

«ՔՈՐՈՆԱ»-Ի ՄԵԾԱՊԵՍ ԱՃՈՂ ԹԻՒԻ ԼՈՅՍԻՆ ՏԱԿ, ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐԱՄՈՒՏԻ ԹՈՒՄԿԱՆԸ՝ ԱՆՈՐՈՇ



Հակառակ բարձրագոյն կրօնութեան նախարարի պաշտօնակատար Թարթե Մաժճուպի յարտարարութեան, թէ Լիբանանի վերամուտը սեպտեմբերի աւարտին է, «Քորոնա» ժաիրի վարակուածներու թիւին զգալի աճը որոշ չափով խանգարեց անոր հաշիւները եւ զինք մղեց վերատեսութեան ենթարկելու իր տուած որոշումը: Այս գծով կրթական՝ պետական թէ սեփական մարզի պատասխանատուներ մտահոգութիւն յայտնած էին Նշուած ժամկետի յարգումին եւ գործադրութեան գծով, նախ՝ դպրոցներու անպատրաստ ըլլալն ու երկրորդ՝ «Քորոնա» ժաիրի վտանգին սաստկացումը նկատի ունենալով: Տակաւին առանց խօսելու գրեական թէ թղթակային ծախսերու յաւելեալ մտահոգութեան մասին:

Այս հարցին անդրադարձաւ Նաեւ սեփական մարզի վարժարաններու սենտիքայի պատասխանատու Ռոտուֆ Ապուտ, որ երէկ յարտարարեց, թէ ցարդ ոչինչ յստակ է վերամուտի ճշգրիտ թուականին գծով՝ տալով իր հիմնաւորումները: Նմանապէս, այլ ղեկավար մը անհաւանական նկատեց կրթական մօտալուտ վերամուտ, յատկապէս՝ աշակերտներու ներկայութեամբ առկայ դասընթացքի առումով: Իսկ հեռակայ դասընթացքի դրութեան գծով բաւարար համակարգիչներու չգոյութիւնն ու համացանցի անկայուն դրութիւնը Նոյնքան արգելակիչ պատճառներ նկատուեցան:

Միւս կողմէ, կարգ մը ծնողներ, յատկապէս համալսարանի աշակերտներու ընտանեկան պարագաներ պատկան կողմերու ուշադրութեան յանձնեցին գրեականի աներեւակայնի տղան՝ տրուած ըլլալով, որ անոնց մեծ մասը օտար արտադրութիւններ են եւ հետեւաբար օտար դրամանիշերով կը ծախսուին:

Դարձեալ կրթական առումով, նախարարի պաշտօնակատար Թարթե Մաժճուպ այսօր մամլոյ առուխով պիտի անդրադառնայ թուայնացած դասագիրքերու:

ՄԵՌԻՏԱԿԱՆ ԱՐԱՔԻՈՅ ԹԱԳԱՒՈՐՆ ՈՒ... Ծարուակուած Ա. Էջէն

Սալման պըն Ապտէ Ազիզ թագաւոր Սեւտական Արաբիոյ կառավարութեան եւ ժողովուրդին անուշով իր անկեղծ բարեմաղթութիւնները յղած է նախագահ Սարգսեանին, Հայաստանի կառավարութեան եւ բարեկամ հայ ժողովուրդին՝ յուսալով, որ մայուն յառաջդիմութիւն եւ բարգաւաճում կ'ապրին:

Մոհամմադ Ապուտ Սալման իշխանը իր շնորհաւորագիրին մէջ Հայաստանին եւ հայութեան յայտնած է յաւելեալ բարգաւաճման իր անկեղծ բարեմաղթութիւնները:

Այս լուրը հաղորդեց Սեւտական Արաբիոյ պաշտօնակալ լրատու գործակալութիւնը, որմէ արտատակեց ընդհանրապէս սեւտական մամուլը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ՝ ՆԵՐՔԻՆ ԹԵ ԱՐՏԱՔԻՆ ԿՈՂՄԵՐՈՒ ԱՌԱՆՅԵԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՅԵՐԹՈՒԹԻՒՆ

31 օգոստոս 2020-ին, Պերլինի մէջ Լիբանանի դեսպան Մուսթաֆա Ատիպի վարչապետ Նշանակումէն ի վեր Լիբանանի կառավարութեան կազմութիւնը առանցքային կարեւորութիւն ստացած է ներքին թէ արտաքին շրջանակներու մօտ, յատկապէս մեկնելով այն մտավախութենէն, թէ թափուր վարչամեքենայի ձգձգումը կրնայ պարարտ հող ստեղծել Նոյնիքը Լիբանանի ընդհանուր վարչաձեւի բնոյթին վերանայման: Փաստօրէն, այս հաւանականութիւնը մէկէ անէի առիթներով շեշտուեցաւ լիբանանեան թէ միջազգային ղեկավարներու կողմէ: Առաջին հերթին ազդանշանը եկած էր Ֆրանսայէն, երբ Լիբանանի «Հոգատար մօր» ղեկավարներ զգուշացուցած էին, թէ Լիբանան կը գահավիժի դէպի անդունդ: Նախագահ Մաքրոն փութացած էր Լիբանան ամենէն արագ ժամանակամիջոցին փրկելու Լիբանանը անոր պատշաճ կերպով: Նմանապէս Միացեալ Նահանգներ եւ երոպական այլ կազմակերպութեան ղեկավարներ իրենց մտավախութիւնները արտայայտեցին՝ իւրաքանչիւրը զօրակցութեան եւ օժանդակութեան ի՛ր ոճը առաջարկելով: Նոյն ծիրին մէջ, Եգիպտոսի արտաքին գործոց նախարարութիւնը վերահաստատեց Լիբանանի զօրակցութեան եւ օժանդակութեան իր պատրաստակամութիւնը՝ միաժամանակ կոչ ուղղելով լիբանանեան կողմերուն՝ անյապաղ փութացնելու Լիբանանի ազգային փրկութեան կառավարութեան կազմութիւնը:



Լ՛ընթանայ: Այս իմաստով եւս, երեսփոխան Իպրահիմ Զանաան երէկ հարց տուաւ, թէ բաժնեկցութեան հաշուարկներէն ու իրաւասութեանց հակամարտութենէն հեռու՝ կառավարութեան մը կազմութեան ձախողութեան դիմաց անհրաժեշտ է հարց տալ, թէ մենք կը գտնուինք իշխանութեան, թէ՞ վարչաձեւի տագնապի դիմաց: «Երկու պարագաներուն ալ, կարելի չէ շարունակել այս մահասփիռ իրավիճակին մէջ», ընդգծեց Ազգային ազատ հոսանքի ընդհանուր քարտուղար, երեսփոխան Իպրահիմ Զանաան «Թուրքի»-ի վրայ երէկ կատարած իր գրառումով: Վարչաձեւի փոփոխութեան մտավախութեան զօրաշարժի մատնած էր Նաեւ լիբանանեան կարգ մը կողմեր, որոնք արդէն իսկ պատրաստած են նախատեսուող «Նոր Լիբանան»-ի մը տեսլականը՝ «Վարչական եւ ելեմտական ընդլայնուած ապակերտացում», «Քաղաքային Լիբանան» եւ այլ պիտակներու տակ: Այս բոլորի զուգահեռ, հանրապետութեան նախագահ գոր. Միշել Անու իրաւարարի, աւելի քան փրկարարի նախաձեռնութեամբ իր կարգին լծուեցաւ քուլիսային աշխուժ ճիգերու՝ առջակից կողմերուն հետ: Հոսկէ՛ վերջերս Նշանակեալ վարչապետ Մուսթաֆա Ատիպի ներկայացուցած դաշինքի կազմի անւանացանկի «սեւագրութեան» գծով նախագահ Անուի առաջադրած յաւելեալ ժամանակի կողմ՝ ապահովելու համար վարչապետ Մուսթաֆա Ատիպի կազմելիք կառավարութեան վաւերացումը լիբանանեան խորհրդարանին կողմէ, ուր 61 թուէներ անհրաժեշտ են անոր մեկնարկին համար:

Միաժամանակ նախագահ Անու մայուն կապի մէջ է Ֆրանսացի իր պաշտօնակիցին հետ՝ հեռաձայնային թէ այս վերջինի ներկայացուցիչ ճամբով: Այս ծիրին մէջ յառաջիկայ օրերը, եթէ ոչ ժամերը, խիստ կարեւոր կը թուին կառավարութեան կազմութեան «սպիտակ ծուխ»-ի բարձրացման իմաստով: Միաժամանակ նախագահ Անու մայուն կապի մէջ է Ֆրանսացի իր պաշտօնակիցին հետ՝ հեռաձայնային թէ այս վերջինի ներկայացուցիչ ճամբով: Այս ծիրին մէջ յառաջիկայ օրերը, եթէ ոչ ժամերը, խիստ կարեւոր կը թուին կառավարութեան կազմութեան «սպիտակ ծուխ»-ի բարձրացման իմաստով:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒՐԵՐ

● ԸՄԱԲԹԱՎԵՐՁԻՆ բանակային տարրեր Պաթրուսի ծովագերեայ բացերուն մօտ յայտնաբերեցին ապօրինի կերպով Լիբանանէն գաղթել փորձած նաւաբեկեալներէն մեկուն դիակը:

● ԵՐԷԿ մեծ հրդեհ մը ծագեցաւ Շուֆի Նահր Զամաճ շրջանի Ղարիֆէ եւ Տարայա անանները բաժնող հովիտին մէջ՝ մեծապէս վնասելով շրջանի ծառերուն ու կանաչութեան: Հրդեհներ փութացան ղեպին վայրի եւ հրդեհը հակակշիռի տակ առին:

● ՉՈՒՔ Միջայելի բացերը դիակ մը յայտնաբերուեցաւ երէկ եւ անմիջապէս փոխարուեցաւ Պուարի պետական հիւանդանոց: Դիակի մէջքին կապուած էր նամակ մը, ուր գրուած էր. «Փրկեցէք մեզ, կորուած ենք, երկու նորաձիներ մահացան»: Կ'ենթադրուի, որ դիակը կը պատկաներ այն խմբակին, որ վերջերս կը փորձեր ծովու ճամբով ապօրինի կերպով գաղթել Լիբանանէն:

● ԸՆԴԿԱՅԻՆ մէջ պենզին քանակի պակաս կայ, սակայն ոչ տագնապ, յայտարարեց պենզինի մարզի պատասխանատուներն Ապու Շաքրա: «Յառաջիկայ շաբաթ որոշ բարելաւում պիտի ար-

ծանագրուի այս մարզին գծով՝ լիբանանեան բոլոր շրջաններուն մէջ», աւելցուց ան: Նշեց, որ շաբաթավերջին պենզինի քանակի նուազումը պատճառով տագնապի որոշ նախաշնչաներ նկատուած էին լիբանանեան կարգ մը շրջաններու, յատկապէս՝ Պեշայի, Պալապեթի շրջանները:



ԾԵՍԻՔԱ ՊԵՉԾԵԱՆԻ ԵՒ ՏԵԼԻԱ ՓԱՓԱԶԵԱՆԻ ՄԱՅՈՒՆՑ ԲԱՌԱՍՈՒՆՔԻՆ ԱՌԻԹՈՎ

ԵՐԵՍՓՈՒԱԿԱՆ ՅԱԿՈՒԹԵՐԻՉԵԱՆ. «ՀԱՇՈՒՄԵՆՈՒԹԵԱՆ ԿԱՆՉԵԼ ՆԱԲԱԶԱՆԳԻՍՏԻ ՈՃԻՐԻՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ»



Հայկական երեսփոխանական պլոքի անդամ, երեսփոխան Յակոբ Թերզեան երէկ կոչ ուղղեց՝ հաշտուութեան կանչելու Պերլինի նաւահանգիստի ոճիրին պատասխանատուները եւ խստագոյն պատժամիջոցներ տնօրինել անոնց դէմ: Պայթումի զոհերէն՝ Ծեսիքա Պեչճեանի եւ Տելիա Փափագեանի մահուանց քառասունքին առիթով Չալքայի հայ կաթողիկէ Ս. Իսաէ եկեղեցու մէջ մատուցուած հոգեհանգստեան արարողութեան աւարտին երեսփոխան Թերզեան պահանջեց հաշտուութեան կանչելու նաւահանգիստի ոճիրին պատասխանատուները: «Մենք կորսնցուցինք թանկագին անձներ, որոնց առջաւետ բաժանումին ոչ մէկ բան կրնայ փոխարինել», շեշտեց Թերզեան վերահաստատելով ոճրագործներու հաշտուութեան ու խստագոյն պատիժի տնօրինումի իր պահանջը: «Անհրաժեշտ է, որ պետութիւնը նիւթապէս եւ բարոյապէս զօրակցի զոհերու ընտանիքներուն, որովհետեւ անոնք հայրենիքի կործանիչ դրուած պատուով շքանշաններ են» քսա Թերզեան եւ աւելցուց. «Հայրենիքս կորսնցուց իր թանկագին երիտասարդները, եւ կացութիւնը որոշ չափով կրնայ փոխուիլ միայն արդարութեան հաստատումով եւ իր պայքարող երիտասարդներով»:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱՐՁԱԿԱՆԳԸ՝ ԸՆԴՂԵՍ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՊԱՏՄԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՆ

«Մեամբ Զոնսթրաքըն» ընկերութեան տնօրէնութիւնը երէկ հաղորդագրութեամբ մը արձագանգեց իրենց դէմ սահմանուած ամերիկեան պատժամիջոցներուն: Տնօրէնութիւնը բացատրեց, որ լիբանանեան ճարտարապետական այս ընկերութիւնը արտօնագրուած է 1988-էն ի վեր եւ դասակարգուած է ըստ Լիբանանի մէջ գործող օրէնքներուն: Ըստ տնօրէնութեան, ընկերութիւնը կը գործէ պետական եւ սեփական մարգերուն մէջ շինարարութեան պայմանագիրներու մարզին մէջ, եւ ծրագրերը կը կատարուին հաստատուած մրցումներու եւ մեքանիզմներու հիման վրայ, եւ լիարժեք թափանցիկութեամբ՝ ընդգծելով, որ ընկերութիւնը իր նախագիծերը կ'աւարտէ ճարտարապետական եւ վարչական բարձրագոյն չափանիշներուն համապատասխան: Հաղորդագրութեան մէջ կը նշուի, որ ընկերութեան լիբանանցի պաշտօնատեղիներու անձնակազմը բաղկացած է մասնագետ ճարտարապետներէ եւ վարչականներէ՝ հակառակ ամերիկեան վարչակազմի սխալ խօսքերուն, վարչակազմ մը, որուն յարձակումներուն, անարդարութեան եւ փտածութեան հետեւանքները տակաւին կը կրէ Լիբանանը: Ընկերութիւնը շեշտեց, որ պիտի շարունակէ իր աշխատանքները կատարել յաջորդող տասնեակ տարիներուն ընթացքին, ինչպէս որ առիկա ըրած էր անցնող 32 տարիներուն ընթացքին:

«Արջ Զոնսայթիկ» ընկերութեան ընդհանուր տնօրէն Ուալտ ժապի Նոյնպէս արձագանգեց ամերիկեան պատժամիջոցներուն՝ նշելով, որ ընկերութիւնը ուսումնասիրութիւններու եւ խորհրդատուութիւններու ճարտարապետական արտօնագրուած ընկերութիւն է, որ հիմնուած է ճարտարապետներու եւ վարչականներու կողմէ, եւ դասակարգուած է ազգային ուսումնասիրութիւններ կատարող ընկերութիւններու շարքին՝ բազմաթիւ նախարարութիւններու եւ պետական հաստատութիւններու մօտ:

Հաղորդագրութեան մէջ նշուած է, որ ընկերութիւնը կը համագործակցի նախարարութիւններու, քաղաքապետութիւններու եւ սեփական մարզին հետ՝ հաստատուած օրէնքներու եւ մրցումներու հիման վրայ, եւ անոր պատմութիւնը լեցուն է ամբողջ երկրին մէջ մշակուած նախագիծերով՝ զարմանք յայտնելով ամերիկեան մեղադրանքին նկատմամբ, որ ընկերութիւնը կ'այսպէս փտածութեամբ է որոշ անդամներու ապօրինի հարստութեամբ՝ Լիբանանի ժողովուրդի հաշտուելու:

Ընկերութիւնը ընդգծեց, որ բոլորը գիտեն, որ ուսումնասիրութիւններու ընկերութիւնները կը շարունակեն պայքարիլ տնտեսական վառարարացած պայմաններուն մէջ, որոնց պատճառ դարձած է ամերիկեան վարչակազմը՝ Լիբանանի նկատմամբ սահմանած իր պատժամիջոցներու քաղաքականութեան եւ անարդար շրջափակման միջոցով:

«ԱԶԳԱԿ»-Ի ՖՈՆՏԻՆ

● Ազգի Գատեանի մահուան առիթով՝ Կեանքեան ընտանիք՝ 100.000 Լ.Ո.

ՍԼԱՔ

ՅԵՏԵՊՏԵՄԲԵՐ 15-ԵԱՆ ՆԿԱՏՈՒՄՆԵՐ

15 սեպտեմբերին Սպիտակ տան մեջ տեղի ունեցավ Իսրայելի հետ Արաբական Միացյալ Եմիրություններում և Պահրեյնի յարաբերություններում...

Համաձայնագիրները ստորագրողները իրենց խօսքերում մեջ շեշտեցին, թե այդ մեկը կարելի պիտի չլլար առանց Թրամփի ջանքերուն...

Լրատուական միջոցներու լուսարձակները ստորագրության արարողության վրայ կեդրոնացնելը կրնայ նպաստել Թրամփի «խաղաղության կերտող մարդ» ըլլալուն քարոզչության...

Արաբական Ծոցի երկու երկիրներուն հետ համաձայնագիր կնքելով Իսրայելը կը մտենայ Իրանի սահմանին՝ հակադարձելով Լիբանանի և վերջերս Սուրիոյ ճամբով՝ Թեհրանի իր սահմանին մտնելուն...

Արաբական Միացյալ Եմիրություններն ու Պահրեյնը՝ Իսրայելի հետ խաղաղության համաձայնագիր կնքելով, դուրս եկան Սեուտական Արաբիոյ «միահեծան» ծածկոյթին կախեալ ըլլալու ոչ նպաստաւոր վիճակէն...

Իսրայելի հետ Մանամայի և Ապու Տապիի յարաբերություններու հաստատումը պիտի մղէ միջազգային պատժամիջոցներու և մեկուսացման ելքակայ Թեհրանը այդ քայլի հակակշռման համար իր տնտեսության կարեւոր շնչերակը եղող Թուրքիոյ հետ յարաբերությունները ամրապնդելու:

Ինչ կը վերաբերի պաղեստինցիներուն, անոնք, թեւ համաձայնության կնքումը Պաղեստինեան դատին դաւաճանութիւն նկատեցին, սակայն նոյնը ըսած էին երբ Եգիպտոսն ու Յորդանանը Իսրայելի հետ նոյնպիսի համաձայնություններ կնքեցին:

Վերջիններս, մասնաւոր Եգիպտոսը, հետազգային այդ համաձայնություններուն շնորհիւ վերածնունդեան պաղեստինեւիսրայելեան հակամարտության կողմերուն միջեւ հաւաստի միջնորդներու: Նոյն դիպաշարն է, որ պիտի կրկնուի:

Համաձայնություններու կնքումը եւ արաբական աշխարհին մէջ համատարած ու զանգաւածային բողոքի ցոյցերու բացակայութիւնը, «ականջ ծակող» ընդհանուր լռութիւնն ու անտարբերութիւնը եկաւ անգամ մը եւս վկայելու արաբ ազգայնականութեան նահանջին տարողութեան և թերեւս առաւել քան երբեք ձեւական մակարդակի վրայ ըլլալուն մասին:

Արաբական պետությունները սկսած են, փոխան արաբական հաւաքական շահերուն, առաւել բացայայտ, անարգել ու համարձակ կերպով գործել՝ ըստ իրենց սեփական շահերուն:

Միջին Արեւելքը յոյ է զարգացումներով. չի բացառուիր, որ արաբական այլ երկիրներ (կը խօսուի Օմանի, Սեուտական Արաբիոյ, Սուտանի և Մարոքի մասին) հետեւին Գաիիթի, Ամանի, Ապու Տապիի և Մանամայի օրինակին:

ՎԱՅՐԱՍ ԷՍՄԻԵՆՆ

ՄԱՀԱՅԱՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԿԻՆ ՆԱԽԱՐԱՐ ՆՈՐԱՅՐ ԴԱԻԹԵԱՆԸ

Մահացաւ բժշկական գիտություններու դոկտոր, Հայաստանի առողջապահության նախկին նախարար Նորայր Դալիթեանը: «Արմենփրենս»-ի հաղորդումով՝ այս մասին Դիմատետրի իր էջով տեղեկացուց տրեանի Միխիթար Հեթումցի անուն բժշկական համալսարանի աշխատակազմի ղեկավար Շուշան Դանիելեանը:



Նր մեծ ցաւով կը տեղեկացնէ գաղափարական ընկեր, ականաւոր այրածքաբան, բժշկական գիտություններու դոկտոր Նորայր Դալիթեանի մահուն մասին և ՀՅԴ Հայաստանի մեծ ընտանիքին անուով կը ցաւակցի սիրելի ընկերոջ ընտանիքի անդամներուն, հարազատներուն և գործընկերներուն:

ՀԱՐՑԱԳՐՈՒՄ ԴՈԿՏ. ԱՍՏՈՒՆԻ ՎԻՐԱԲԵԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԶՐԿՄԱՆ ԱՌԻՈՎ

Վերջերս Հայաստանի ազգային արխիւներու (ՀԱԱ) տնօրէն Ամատունի Վիրաբեան հեռացուած է Արդարադատության նախարարի հրամանով: Հակառակ անոր որ հարցին վերաբերող ամբողջական տեղեկությունները չունին, սակայն կը զարմանալէ տրուած պատճառն ի յուր: Կը նկատենք, որ Ամատունի Վիրաբեանին չի վերագրուիր անձնական չարաշահում, եւ եթէ սխալ մը կատարուած է՝ դատարանին կողմէ հաստատուած չէ: Կը նկատենք նաեւ, որ քանի մը տարի առաջ որոշ անձերու կողմէ ճիգ ի գործ դրուեցաւ զայն պաշտօնէն հեռացնելու: Եւ երկար քննություններէ ետք ամբաստանությունները անհիմն նկատուեցան: Ա. Վիրաբեանը գող-աւազակի նման արագօրէն գործէն դուրս դրուիլը՝ նախարարութեան որոշումով, զարմանալի կը գտնենք, մասնաւոր որ անոր՝ թոշակի անցնելուն մնացած էր քանի մը ամիս:

Սրտանց եւ անձա՛մբ սատարած է իր հաստատութեան զարգացման, հակառակ բազմապիսի եւ բաւական դժուար պայմաններու. անդրադարձած ենք, թէ որքան դիւրացուցած է հետազոտողներուն գործը, օգնած է ուսանողներու՝ ըլլան անոնք Հայաստանէն թէ արտասահմանէն: Մէկ անգամուան համար իսկ նոյնիսկ դժգոհութեան շնուկ չենք լսած անոր մասին: Մեզի համար անընդունելի է տեսնել այսպիսի կոշտ եւ անյարգալից վերաբերում տասնեակ տարիներ ծառայած անձի մը նկատմամբ: Կ'ուզենք հաստատուի, որ անցեալի շրջանակներու աշխատելակերպի փոփոխութեան ձգտող Նոր իշխանութիւնները ի վիճակի են գնահատելու ցորենը որումն է և ատակ են պետք եղած յարգանքը մատուցանելու Ամատունի Վիրաբեանի նման արժանաւոր մարդոջ:

ԴՈԿՏ. ԱՍՏՈՒՆ ԱՍՏՈՒՆԵԱՆ (Քալիֆորնիոյ Պոլոզի համալսարանի հայկական ծրագրի տնօրէն) ԴՈԿՏ. ՌԵՅՆՈՆ ԳԵՈՐԳԵԱՆ (Հետազոտութեան պատուաւոր տնօրէն՝ աշխարհաքաղաքականութեան ֆրանսական կամուրջի մէջ) ՏՈՔՔ. ՓԵՏՅՈՐ ԲԻՅՉԻԻԵԱՆ (Գրող եւ հրատարակախօս, Միլան)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻՈՎ՝ ՊՐԱԶԻԼԻ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐՁԱՆԸ ԿԸ ԼՈՒՍԱԻՌՈՒԻ ԵՌԱԳՈՅՆՈՎ

Երկուշաբթի, 21 սեպտեմբերին, Պրազիլի Ռիօ տե Ժանեյրօ քաղաքին մէջ Յիսուս Քրիստոսի հսկայ արձանը պիտի լուսաւորուի ի պատիւ Հայաստանի Հանրապետության անկախութեան 29-րդ տարեդարձին:



Մատերի էջէն ուղիղ հեռարձակմամբ: (https://www.facebook.com/consuladodaarmenia)

Հայաստանը աշխարհի առաջին պետութիւնն է, որ քրիստոնէութիւնը ընդունած է իբրեւ պետական կրօն: Քրիստոսի արձանին մօտ կայանալիք այս իրադարձութիւնը յատուկ նշանակութիւն ունի այն հայ սերունդին համար, որ կ'ապրի Պրազիլի մէջ՝ խաղաղութեան երկրի, որ այդքան լաւ ընդունեց հայութիւնը:

Պրազիլն ու Հայաստանը այսպիսով կը նշեն նաեւ իրենց բարեկամութեան 100-ամեակը: Այս նախաձեռնութեան հեղինակն է Ժոտել Լարչըր, պիտի ինչէ Վիք Չարթմանի «Աստուած օրինէ Հայաստանը» երգը, որուն պիտի ընկերակցի «Անկախութեան երիտասարդութիւն» նուագախումբը՝ Սերկէյ Աքաբաբեանի գեղարվեստական ղեկավարութեամբ:

Նախաձեռնութեան կրկնաձեռն երկուշաբթի, 21 սեպտեմբերին, Պրազիլի ժամանակացոյցով ժամը 19:30-ին (GMT-3), Պրազիլի մէջ Հայաստանի հիւպատոսարանի Դի-

ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆ ՍԸ, ՈՐՈՒՆ ՀԱՄԱՐ ԱՐԺԵ ԱՊՐԻՆ

Ես հայ մըն եմ, ծնած, դատարկալիւս եմ Դեյրոբ, Լիբանան եւ ունիմ լիբանանեան հպատակութիւն:



2005 թուականին ա շ ի ա տ ա ն ք ա յ ի ն ն ս տ ա վ յ ա ռ ա հ ս տ ա տ լ ւ ց ւ ա Ն ի կ ո ս ի ա, Կ ի պ ռ ո ս, ու ի ն ա ե ս ս տ ա ց ա կ ի պ ռ ա կ ա ն հ պ ա տ ա կ ու թ ի ն: Արդեւ եղաւ անելի քան երեսուն երկար տարիներ, որ կը գործէ Արաբական Ծոցի երկիրներու տարածաշրջանին մէջ:

Այս իրականութիւնը տուն կու տայ հարցումի մը. «Ո՞ր է իմ տունս՝ Պէրո՞ւթ, Նիկոսիա՞, Զուէ՞յթ, թե՛...»: Երեւի կրնամ ներկայացնել սփիւռքահայու ապրած կեանքի մէկ լաւ տարբերակ՝ ապրելով քիչ մը հոս ու հոն: Բայց իմ սրտին մէջ կայ սեր եւ երախտագիտութիւն: Մերը եւ երախտագիտութիւնը հանդէպ այն երկիրներուն, որոնք ինծի տունն հպատակութիւն, ինքնութիւն, ուսում, երդիք եւ մարտահրաւիր, որպէսզի կարենամ արժեքի կեանքը կերտել: Իմ սրտին մէջ կայ նոյնքան ուրախութիւն եւ անձկութիւն՝ իմ հայրենիքս՝ Հայաստանի Հանրապետության նկատմամբ, որուն անկախութեան 29-րդ տարեդարձն է սեպտեմբեր 21-ին:

Այս այն հայրենիքս է, որ իմ սրտիս մէջ կը կուտակէ հպարտութիւնը՝ իւրաքանչիւր անգամ որ իրեն այցելութեան կ'երթամ: Հոն, ուր կեանքս համար մշակոյթի հասկացողութիւնը կը մշակուի, եւ քրիստոնէական հաւատքս կը զօրանայ: Հայրենիքը, ուր իմ ազգային ինքնութիւնը կը միարձուկ նոյնիսկ իր հարազատ հողին մէջ, եւ որուն մէջէն իմ պատկանելիութեան գիտակցութիւնս կ'արտացոլայ եւ կը բերելուայ:

Այսօր իւրաքանչիւր հայ ունի կարեւոր առաքելութիւն մը՝ պահելու, հոգալու եւ ծաղկեցնելու հայրենիքը, անկախ անկէ, թէ ո՞ր կ'ապրի: Անկախութիւնը այս իմաստով հայուն համար պետք է դառնայ առաքելութիւն, որուն համար արժէ ապրիլ:

Շնորհաւոր անկախութեան տարեդարձը, Հայաստանի Հանրապետության Անկախութիւն մը, ուր հայուն կեանքի ինքնութիւնը կը խարսխուի եւ կը վերածուի ազգային առաքելութեան: Առաքելութիւն մը, որ մեր կեանքերը կը դարձնէ իմաստալից: Իսկ ասիակայ այն առաքելութիւնն է, որ հայուն կեանքը կը դնէ պատմութեան շարունակականութեան մէջ:

ԴՈԿՏ. ԳՐԱՅՐ ԾԵՂԵՏԵԱՆ Ընդհանուր Զարտուղար Արաբական Ծոցի Աստուածաշունչի Ընկերակցութեան

ԻՍՐԱՅԵԼԱԳԻ ՊԱՇՏՈՆԱՍԱՐՆԵՐ...

Շարունակուած Ա. Էջէն

Իսրայելացի պաշտօնատարները անցող քանի մը օրերուն Արաբական Միացյալ Եմիրություններու մէջ բանակցած են նաւթային արտադրութիւններու փոխադրման խողովակաշարի կառուցման գծով: Անոնք նշեցին, որ խողովակաշարը պիտի անցնի Սեուտական Արաբիայէն եւ հասնի Կարմիր ծովուն վրայ իսրայելեան Իլաթ նաւահանգիստ, ուրկէ ալ՝ Աքաբաի նաւահանգիստ:

ՄԱՀԱԶԳ

Տիկին Մարիթան Չուլիքեան եւ զաւակը՝ Ճօ Տեր եւ տիկին Վաչէ եւ Ժուլիէ Լեզգարեան

Տեր եւ տիկին Յովհաննէս եւ Ռիթա Եթերեան եւ ընտանիք

Տեր եւ տիկին Սիմոն եւ Զարթին Չուլիքեան եւ ընտանիք

Տիար Տանիէլ Չուլիքեան Չուլիքեան եւ Աբգարեան ընտանիքներ Եթերեան եւ Ումտեան ընտանիքներ

Պողեան եւ Շահպազեան ընտանիքներ եւ համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր եւ հարազատին՝

ՄԱՐԳԻՍ ԶՈՒԼԻՔԵԱՆԻ (Ծնեալ՝ 1942-ին)

մահը, որ պատահեցաւ կիրակի, 20 սեպտեմբեր 2020-ին, յետ կարճատեւ հիւանդութիւն: Յուրակաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ կիրակի, 20 սեպտեմբեր 2020-ին, կէսօրէ ետք ժամը 2:30-ին, Չուլիքի Հայ կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի հայ կաթողիկէ գերեզմանատունը:

•Ներկայս ընդունիլ իբրեւ մահագոջ: •Ցաւակցութիւնները կ'ընդունուին Ս. Խաչ եկեղեցոյ սրահին մէջ երկուշաբթի, 21 սեպտեմբերին կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 6:00: •Ցաւակցութիւններու համար՝ Ծօ Չուլիքեան 03-586899 - Ժուլիէ Լեզգարեան 03/264101 Ռիթա Եթերեան 71/664098:

Advertisement for AFHIL Armenian Mutual Fund, featuring a logo and text: 'The BEST WAY to Find Yourself is to LOSE YOURSELF in the Service of Others'. It lists various insurance and investment services.

ԻՐԱՅԷԼԵԱՆ ԿԱՅՔ ՄԸ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԵ ՄՈՐՆԻԷՆ ԱՐԱԲԵԿՈՂԻՆ ԻՆՔԵՆՈՒԹԻՆԸ

Իրալիայի և Պաղեստինի անվտանգության գաղտնիքները բացայայտելու մեջ մասնագիտացած «Թի-քոն Օլամ» (Գրաքննության ձախողություն) կայքը, որ Միացյալ Նահանգներում մեջ հաստատուած է, բացայայտեց 2008 թուականին Չճգալայի մարտական ղեկավար Իմատ Մուրդիի անհաբեկած անձին անունը:

Կայքը գրեց. «Օրաթերթը («Նի Երթըր») հաղորդեց, թե Չճգալայի թիւ երկու ղեկավար Իմատ Մուրդիի 2008 թուականին անհաբեկումը «Սի.Այ.Էյ.»-ի եւ Մոսատի միացեալ գործողութիւն մըն էր, եւ տոր նպատակը վրէժ լուծել էր՝ Միացեալ Նահանգներում պատկանող թիրախներու ականահարման մեջ անոր ենթադրեալ դերակատարութեան համար, 1982 թուականին՝ Պեյրոսի մեջ անազնեցի ռազմականակա ականահարման, ինչպէս նաեւ Պուէնտո Այրեսի մեջ իրալիական ղեկավարան ու հրէայ համայնքի կեդրոնի ականահարմանը»:

Կայքը յայտնեց, թէ Մուրդիի անհաբեկման համար օգտագործուած ականը պատրաստողը Նաում Եարեզ է՝ Մոսատի փոխղեկավարը:

Ան նկատեց, որ Մոսատը լքել է տեղ դարձած է իրալիական համացանցային ընկերութեան մը նախագահը:

ԻՐԱՆԻ ՅԵՂԱՓՈՒՍՈՒԹԵԱՆ ՊԱՀԱԿԱԳՈՒՆԴԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԿԸ ԽՈՍՏԱՆԱՅ ԲԱՍԵՄ ՄԻՒԼԷՅՄԱՆԻՆ ՎՐԵԺԸ ԼՈՒԾԵԼ

Իրաքի մեջ ամերիկեան ռազմականակա խմբակներու հասցեւած հարուածը վերջնական եւ ամբողջական վրէժ չէր իրանցի գորավար Զասեմ Սիւլեյմանիի սպանութեան համար:

Ռուսական «ՌԻԱ Նովոսթի» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Իրանի Յեղափոխութեան պահակագունդի հրամանատար Զուսէյն Սալամի:

«Եթէ ամերիկացիները կ'ուզեն մեզի հետ կռուիլ, անոնք պետք է տարածաշրջանին մեջ ըլլան, անոնք չեն կրնար մեզի հետ տարածաշրջանէն դուրս պատերազմիլ: Երբ անոնք կը տեղակայուին տարածաշրջանին մեջ, այն ատեն անոնք ամենուր կը գտնուին մեր հսկողութեան տակ եւ մեր տեսադաշտի մեջ: Մենք ի վիճակին ենք շրջանին մեջ այրել անոնք բոլոր շահերը, կրնանք գրաւել ամերիկեան բոլոր ռազմակայանները: Մենք կրնանք մաքրել տարածաշրջանը», յայտարարած է Սալամի:

Ան նշած է, որ գործողութիւնը, որուն ընթացքին հարուածներ հասցեւած են Իրաքի մեջ ամերիկեան ռազմակայաններու, ներառեալ՝ Այն Ասատ ռազմակայանին, տակաւին վրէժ չեն նկատուի Սիւլեյմանիի



մահուան համար, այլ այդպիսով ընդամենը վերականգնած է հոգեբանական հաւասարակշռութիւնը: Ամերիկացիները, ըստ հրամանատարին, պետք է վճարեն իրանցի գորավարին մահուան համար՝ բան մը, որ անոնք տակաւին չեն ըրած:

Իրանի Յեղափոխութեան պահակագունդի «Քուստ» ջոկատի հրամանատար գոր. Զասեմ Սիւլեյմանիին սպանուած էր Պաղեստինի մեջ 3 յունուարին:

Իրանի գերագոյն հոգեւոր պետ այաթոլլա Ալի Խամենէին խոստացած էր վրէժ լուծել անոր սպանութեան համար: Օրեր ետք, Իրանի Յեղափոխութեան պահակագունդը յայտարարած էր գորավարի սպանութեան համար վրէժ լուծելու գործողութեան սկսման մասին՝ հրթիռահրթիռներով Իրաքի արեւմուտքը գտնուող ամերիկեան Այն Ասատ ռազմակայանը:

ԹՈՒՐԲԻՈՅ ՄԵՉ ՅՈՒՆԱՍԱՆԻ ԳԵՄՊԱՆԸ ԿԱՆՉՈՒՄԸ Է ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆ՝ «ՅՈՒՆԱԿԱՆ ԹԵՐԹԻ ՄԵՉ ԷՐՏՈՂԱՆԻ ՄԱՍԻՆ ՈՉ ՊԱՏՇԱՃ ՎԵՐՆԱԳԻՐԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ»

Անգարայի մեջ Յունաստանի ղեկավար կանչուած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւն՝ յունական թերթերէն մեկուս մեջ լոյս տեսած հրապարակումներու պատճառով, որոնք կը բովանդակէին վիրաւորական արտայայտութիւններ Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողանի մասին:

Թերթական պետական «Անատոլու» լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին մամուլը ասուլիսի ժամանակ յայտարարած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մեւլուժ Չաւուշօղլուն:

«Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը իր մօտ կանչած է Յունաստանի ղեկավարը՝ յունական թերթին մեջ Թուրքիոյ նախագահին վերաբերող ոչ պատշաճ վերնագիրի պատճառով», յայտարարած է Չաւուշօղլու:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարը նշած է. «Վիրաւորանքներն ու հայտնանքները պետք չէ իբրեւ մամուլի ազատութեան նկատուի»:

Ան անդարարած է նաեւ Կիպրոսի հարցի լուծման շուրջ ստեղծուած իրադրական կիսափակումը, որ Անգարան բազմիցս յայտարարած է, թէ այլեւս պիտի չբանակցի դաշնակցային դրութեան ստեղծելու վերաբերեալ:

Չաւուշօղլու ընդգծած է, որ անիմաստ է Կիպրոսի մեջ դաշնակցային դրութեան ստեղծելու նոր նախաձեռնութիւններ յառաջ մղելը, որովհետեւ ատոնք դատարարուած են ձախողութեան:

«Անկարելի է դարձեալ սկսիլ այն տեղէն, ուր մենք կանգ առած ենք: Մենք չենք կրնար բանակցութիւններու սկսիլ այն վայրէն, ուր սկսած է «Կրան-Մոնթանա» (բանակցութիւններ Կիպրոսի հարցի լուծման շուրջ՝ Չուիքերիոյ Կրան-Մոնթանա քաղաքին մեջ): Բանակցութիւնները անարտած են, ատոնք ձախողած են: Նոր արկածախնդրութեան սկսիլը անիմաստ է, ատոնք դատարարուած են ձախողութեան», նշած է թերթական դիւանագիտութեան պետը:

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՐԱՆՈՒՄԸ ԿԸ ՎԵՐԱԿԱՆՈՒՄԸ...

Շարունակուած Ա. Էջէն

ձախողութեան հետեւանքները յաղթահարելու՝ երաշխաւորելու համար, որ Իրան պիտի չօգտուի ՄԱԿ-ի արգիլած գործունեութիւններէն»:

Եւրոպական Միութիւնը մերժեց ՄԱԿ-ի պատժամիջոցներու վերականգնումը: Եւրոպական եռեակը՝ Ֆրանսա, Գերմանիա եւ Բրիտանիա, որոնք մասնակից են Իրանի հետ կնքուած համաձայնութեան, ընդգծեցին, որ Ուաշինկթըն իրաւատա՞ չէ պատժամիջոցները վերականգնելու, որովհետեւ իր ազատ կամքով դուրս եկած է հիւլեական համաձայնութեանէ:

Անոնք նշեցին. «ՄԱԿ-ի պատժամիջոցները վերականգնելու որեւէ որոշում կամ քայլ պիտի ըլլայ առանց որեւէ իրաւական հիմնարկով»:

Յիշեցնենք, որ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը օգոստոսին մերժած էր Իրանի դէմ զենքի մատակարարման արգելքը երկարաձգելու ամերիկեան նախագիծ մը:

ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղար Անթոնիո Կուիթերես յայտնեց, որ չի կրնար ամերիկեան յայտարարութեան վերաբերեալ որեւէ քայլ առնել՝ նկատի ունենալով, որ հարցին մեջ «կասկած» գոյութիւն ունի:

Կուիթերես ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին յղած իր նամակին մեջ ըսաւ. «Ըստ երեւոյթի, կասկած կայ այդ հարցին շուրջ՝ թէ արեւելահարկային զորքերը իրենց կ'ապահովեն իրենց իսկապէս սկսուած, եւ նոյն ատեն կասկած կայ, թէ (պատժամիջոցներու) վերջ տալը տակաւին ի գործը՞ն է»:

«Ընդհանուր քարտուղարը չի կրնար վարուիլ այնպէս, կարծեք նման կասկած մը գոյութիւն չունի», անցուցու Կուիթերես:

Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը յայտնեց. «Իրանի վերաբերող թիւ 2231 որոշումը տակաւին ի գործ է, եւ հիւլեական համա-

ձայնութեան պահպանման ջանքերը կը շարունակուին»:

Մեկնաբանելով Իրանի դէմ ՄԱԿ-ի բոլոր պատժամիջոցները վերականգնելու ամերիկեան միակողմանի որոշումը՝ Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը ընդգծեց. «Ուաշինկթըն չի խօսիր Ապահովութեան խորհուրդին անունով»:

«Իրականութիւնն այն է, որ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը Իրանի դէմ իր հաստատած նախկին պատժամիջոցները վերականգնելու որեւէ քայլ չառաւ, եւ Ուաշինկթընի ըրածը թատերական ներկայացում մըն է, փորձ մը Ապահովութեան խորհուրդի քաղաքականութիւնը Իրանի դէմ իր հաստատած առաւելագոյն ճնշումի գործադրման քաղաքականութեան մէկ բաժնի վերածելու, եւ որոշումի տեղ այդ մարմինը դարձնելու իր ձեռքին տակ գործող կամակարարի», նշեց Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը:



Շարունակուած Ա. Էջէն

ՀԱՃՆՈՑ ԶԵՐՈՍԱՍԱՐՏԻ 100-ԱՍԵԱԿԻ ԱԲՆԱԴԱԿԱՆ ՍԱՏԱԴԻ ՊԱՏՐԱՏՈՒԹԻՒՆ

Հաճնոյ հերոսամարտի նահատակներուն նուիրուած անանդական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ շաբաթ, 3 հոկտեմբեր 2020-ին:

100-ԱՍԵԱԿԻ ՅՈՒՇԱԿՈՒԹՈՂԻ ԲԱՅՅՈՒՄ

Տեղի պիտի ունենայ կիրակի, 4 հոկտեմբեր 2020-ին, յաւարտ Ա. պատարագի եւ մատուորիները:

- Նկատի առնելով երկրի ներկայ կացութիւնը՝ խորհրդանշական մատաղի պատրաստութիւնը տեղի պիտի ունենայ շատ սահմանափակ ներկայութեամբ:

Այս տարի շրջուն հանգանակութիւն տեղի պիտի չունենայ, հետեւաբար, այն հայրենակիցները, որոնք կը փափաքին մատուորու ոչխար կամ նուիրատուութիւն կատարել, կրնան փոխանցել Հաճնոյ հայրենակցական միութեան գրասենեակ, նաեւ՝ Ս. Գեորգ եկեղեցւոյ խորհուրդատուները:

ՀԱՃՆՈՑ ՀԱՅՐԵՆԱԿԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

«ԱՆՎՃԱՐ ՀԱԳՈՒՍԻ ԱՇԽԱՐՀ» ԱՌԱՋՆՈՐԿԱՐԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԲԱԺԸՆՄՈՒՆԵՐԻ ՄԵՉ

Երեքշաբթի, 22 սեպտեմբերին մինչեւ ուրբաթ, 25 սեպտեմբեր 2020, առաւօտեան ժամը 10:00-էն մինչեւ յետմիջօրէի ժամը 4:00, Ազգային առաջնորդարանի Ընկերային ծառայութեան բաժանմունքը Սրբոց Զատնասից Մանկանց եկեղեցւոյ շրջափակին մեջ կը կազմակերպէ «ԱՆՎՃԱՐ ՀԱԳՈՒՍԻ ԱՇԽԱՐՀ» ծրագիրը:

Յաջորդական չորս օրերու ընթացքին առաջնորդարանի Ընկերային ծառայութեան բաժանմունքը անվճար կերպով մեր ժողովուրդին տրամադրութեան տակ պիտի դնէ բոլորովին նոր կամ լաւ վիճակի մեջ եղող տարբեր տարիքներու հագուստեղէն, որոնք անցնող ամիսներուն հաւաքուած են անհատներու եւ հաստատութիւններու նուիրատուութեամբ:

Ընկերային բաժանմունքին կողմէն, աշխատանքին կամաւորաբար պիտի օժանդակեն եւ առողջապահական պայմաններուն հսկեն եկեղեցիներու տիկնանց յանձնարարութեամբ:

ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԿԱՐԱՆԻ ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԵԱՆ ԲԱԺԸՆՄՈՒՆԵՐ